

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝

ՀԱՐՑԵՐ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ



Քաղաքացիկան հասարակության զարգացման միություն ՀԿ
Հետաքննող լրագրողների ընկերակցություն ՀԿ

Երեւան 2002

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է տեղեկություն ստանալու իրավունքը:

Տեղեկություն ստանալու իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է: Այն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածում, որի 2-րդ մասը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»: Դա նշանակում է, որ յուրաքանչյուրը՝ անկախ նրանից՝ Հայաստանի քաղաքացի է, թե ոչ, կարող է բոլոր աղբյուրներից տեղեկություններ պահանջել, ստանալ եւ տարածել ցանկացած միջոցով:

2. Ո՞ր միջազգային փաստաթղթերն են հանդիսանում տեղեկատվության ազատության երաշխիքը

Տեղեկատվության ազատության հիմնական սկզբունքները ամրագրված են «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 19 հոդվածում, որը հռչակում է.

Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության եւ դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք. այդ իրավունքը ներառում է իր համոզմունքներին հավատարիմ մնալու ազատությունը եւ ցանկացած միջոցներով ու պետական սահմաններից անկախ տեղեկատվություն եւ գաղափարներ որոնելու, ստանալու եւ տարածելու ազատությունը:

3. Ինչպե՞ս է ամրագրվում Տեղեկատվության ազատությունը տարբեր երկրների օրենսդրություններում

Տեղեկատվության ազատությունը երկրի օրենսդրական դաշտում կարող է տարբեր կերպ արտահայտվել.

-տեղեկություն ստանալու իրավունքը կարող է ամրագրված լինել երկրի հիմնական օրենքում՝ Սահմանադրությունում,

-երկրում գոյություն ունի «Տեղեկատվության ազատություն մասին» հատուկ օրենք, որը մանրամասն ներկայացնում է ինչպես մատչելիության սկզբունքները, այնպես էլ դրանց իրագործման մեխանիզմները,

-բացի «Տեղեկատվության ազատության մասին» օրենքից գործադիր իշխանության կազմում գոյություն ունի հատուկ մարմին կամ խորհրդարանի հսկողության ներքո՝ օմբուսմեն, որը խորհրդատվական հիմունքներով հետետում է տվյալ ոլորտում տիրող իրավիճակին:

4. Ո՞ր երկրներում է ընդունված «Տեղեկատվության ազատության մասին» օրենք (կամ նմանատիպ օրենքներ)

Ներկայումս Տեղեկատվության ազատության մասին օրենք ընդունված է ավելի քան 20 երկրներում:

«Տեղեկատվության ազատության մասին» առաջին օրենքն ընդունվել է Շվեդիայում 1766 թվականին:

200 տարի անց՝ 1951 թվականին Ֆինլանդիան ընդունեց համապատասխան օրենք:

1966 թվականին ԱՄՆ-ում ընդունվեց «Տեղեկատվության ազատության ակտ»-ը:

Այսօր «Տեղեկատվության ազատության մասին» օրենքներ են ընդունել Դանիան, Նորվեգիան, Ավստրիան, Ֆրանսիան, Հոլանդիան, Իռլանդիան, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Ավստրալիան եւ այլն:

5. Ո՞վ կարող է տեղեկություն պահանջել:

Սահմանադրության 24-րդ հոդվածը տեղեկություն ստանալու իրավունք է սահմանում հասարակության յուրաքանչյուր անդամի համար: Ի լրումն Սահմանադրության, «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի առաջին հոդվածը տեղեկություն ստանալու իրավունք է տալիս ոչ միայն ՀՀ քաղաքացիներին եւ իրավաբանական անձանց, այլեւ ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիներին եւ քաղաքացիություն չունեցող անձանց:

6. Ու՞մ կարելի է դիմել տեղեկություն ստանալու պահանջով:

«Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիները, իրավաբանական անձինք իրենց առաջարկությունները, դիմումները եւ բողոքները ժամանակին եւ օրենքով սահմանված կարգով քննարկելու նպատակով տալիս են այն պետական մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, դրանց պաշտոնատար անձանց, կազմակերպություններին, որոնց անմիջական տնօրինությանն է վերապահված տվյալ հարցի լուծումը: Եթե առաջարկություններում, դիմումներում, բողոքներում առաջարկված հարցի լուծումը վերապահված չէ այն մարմնի/կազմակերպության կամ պաշտոնատար անձի տնօրինությանը, որին տրվել է դիմումը, ապա այդ մարմինը/կազմակերպությունը դիմումը ոչ ուշ, քան 5-օրյա ժամկետում պետք է ուղարկի ըստ պատկանելության կամ այդ մասին ծանուցի դիմողներին, իսկ անձնական ընդունելության ժամանակ պարզաբանի, թե ում պետք է դիմել:

7. Ի՞նչ տեսքով կարելի է ձեռք բերել տեղեկությունները:

Տեղեկություն ստանալու նպատակով պետական մարմնին դիմած քաղաքացուն պատասխան տրվում է գրավոր կամ դիմողի համաձայնությամբ՝ բանավոր («Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 6):

8. Ի՞նչ ժամկետներում մարմինը/կազմակերպությունը պետք է տրամադրի պահանջվող տեղեկությունը:

Քաղաքացիների, իրավաբանական անձանց դիմումները քննարկվում եւ պահանջվող տեղեկատվությունը տրամադրվում է 15 օրվա ընթացքում: Սակայն, լրացուցիչ ուսումնասիրություն եւ ստուգում պահանջող դիմումների եւ բողոքների համար սահմանված է մեկամսյա ժամկետ: Այն դեպքերում, երբ պահանջվող տեղեկությունները տրամադրելու կամ դիմումում առաջադրված հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է լրացուցիչ նյութեր պահանջել կամ ձեռնարկել այլ միջոցներ, տեղեկությունների տրամադրման օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան 15 օրով: Պետական մարմինը ժամկետի հետաձգման մասին պետք է պարտադիր տեղեկացնի դիմում կամ բողոք տված անձին:

Առանձին դեպքերում քաղաքացիների եւ իրավաբանական անձանց դիմումներն ու բողոքները վերցվում են «հատուկ հսկողության», եւ դրանց կատարման համար սահմանվում են անհատական ժամկետներ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ

Տեղեկություն ստանալու իրավունքը յուրաքանչյուրի սահմանադրական իրավունքն է:

Քաղաքացիների, իրավաբանական անձանց դիմումները քննարկվում եւ պահանջվող տեղեկատվությունը տրամադրվում է 15 օրվա ընթացքում:

ՀՀ օրենսդրությունը վճար չի նախատեսում պահանջվող տեղեկությունների համար: Միայն առանձին դեպքերում փաստաթղթերի ձեռք բերման համար օրենքով սահմանված է պետական տուրք:

Քաղաքացուն կարող են մերժել տեղեկություններ տրամադրել, եթե պահանջվող տեղեկատվությունը պարունակում է օրենքով պահպանվող գաղտնիք:

Բողոքները վերադասին քննարկվում են 15 օրվա ընթացքում:

Յուրաքանչյուր քաղաքացի, իրավաբանական անձ իրավունք ունի բողոքով դիմել դատարան, եթե գտնում է, որ անօրինակափ գործողություններով (որոշումներով) խախտվել են իր իրավունքներն ու ազատությունները:

9. Կա՞րդյոք դիմում կամ բողոք գրելու հատուկ ձեւ:

Օրենքով սահմանված են դիմումներին, բողոքներին եւ առաջարկություններին ներկայացվող պահանջները: Գրավոր դիմումը, բողոքը եւ առաջարկությունը պետք է ստորագրված լինի՝ նշելով դիմումատուի ազգանունը, անունը, հայրանունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության հասցեն: Նկատենք, որ նշված պահանջները խախտելու դեպքում դիմումը կարող է ոչնչացվել: Օրենքի պահանջներին համապատասխան դիմում, բողոք ներկայացնելու համար Ինֆորմացիայի ազատության կենտրոնը մշակել է դիմումի եւ բողոքի տիպային օրինակներ, որպեսզի բացառվեն սխալներն ու բացթողումները, հետեւաբար եւ այդ հիմքով քաղաքացու տեղեկություն ստանալու հարցումը մերժելու հնարավորությունը:

10. Պե՞տք է արդյոք վճարել տեղեկություն ստանալու համար:

Ընդհանուր առմամբ, ՀՀ օրենսդրությունը վճար չի նախատեսում պահանջվող տեղեկությունների համար: Բայց որոշ դեպքերում փաստաթղթերի ձեռք բերման համար օրենքով սահմանված է պետական տուրք: Պետական տուրքի չափը եւ վճարման կարգը սահմանված է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրք է գանձվում դատարանի, նոտարական գրասենյակների, քաղաքացիական կացության ակտերի գրանցման վարչությունների եւ այլ ծառայությունների կողմից տրվող փաստաթղթերի պատճենների տրամադրման համար: Այդ պատճենների համար սահմանված պետական տուրքի տարբեր դրույքաչափերը հաշվարկվում են «զննատման ենթակա գույքի արժեքի կամ սույն օրենքով սահմանված բազային տուրքի՝ 1000 դրամ, նկատմամբ» («Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հոդված 8):

11. Ո՞ր դեպքերում պետական մարմինը կարող է մերժել տեղեկատվության տրամադրումը:

Քաղաքացուն կարող են մերժել տեղեկություններ տրամադրել երկու հիմքով.

ա. Եթե դրանք ստանալու հարցման ձեւը (տես կետ 6) չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին: Առանց այդ պահանջների կատարման առաջարկությունը, դիմումը, բողոքը համարվում է անստորագիր, չի քննարկվում եւ սահ-

մանավաճ կարգով ոչնչացվում է: Այն չի քննարկվում նաև այն դեպքում, երբ պարզվում է, որ դրա հեղինակի ինքնությանը վերաբերող տվյալները կեղծ են:

բ. Եթե պահանջվող տեղեկատվությունը պարունակում է ՀՀ օրենսդրությամբ պահպանվող գաղտնիք: ՀՀ օրենսդրությունը, սակայն, չի պարտավորեցնում պետական պաշտոնյային հիմնավորել իր մերժումը: Գաղտնիքների սահմանադրական հիմքերը տրված են Սահմանադրության 48-րդ հոդվածում, որը նշում է. «Արեգվում է իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն և պատերազամ քարոզելու նպատակով»: Գաղտնիք են համարվում.

ա. պետական և ծառայողական գաղտնիքը («Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, հոդված 2),

բ. բանկային և առևտրային գաղտնիքը («Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, հոդված 4, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 141),

գ. նախաքննության և հետաքննության գաղտնիքը (ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 201),

դ. անձնական կամ ընտանեկան գաղտնիքը (ՀՀ Սահմանադրություն, հոդված 20),

ե. որդեգրման գաղտնիքը (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 220),

զ. և այլն:

12. Ինչպե՞ս է ի՞նչ ժամկետներում կարելի է բողոքարկել տեղեկություն ստանալու մերժումը:

Եթե պետական մարմինն անհիմն մերժում է տրամադրել պահանջվող տեղեկատվությունը կամ ընդհանրապես չի պատասխանում քաղաքացու դիմումին, ապա մերժումը կարելի է բողոքարկել երկու ձեռով.

1. Վարչական կարգով- Այսինքն՝ քաղաքացին, իրավաբանական անձը, որին մերժել են տեղեկություն տրամադրել կամ, որը համաձայն չէ իր դիմումի, առաջարկության կամ բողոքի առթիվ ընդունված որոշմանը, իրավունք ունի այդ որոշումը կամ պետական պաշտոնյայի անգործությունը բողոքարկել այն մարմնին կամ պաշտոնատար անձին, որին անմիջականորեն ենթակա են տեղեկատվության տրամադրումը մերժած կամ բողոքարկվող որոշում ընդունած պետական մարմինը, տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը: Բողոքները քննարկվում են 15 օրվա ընթացքում: «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածն արգելում է քաղաքացիների բողոքները լուծման ուղարկել այն պաշտոնատար անձանց, որոնց գործողությունները բողոքարկվում են:

2. Դատական կարգով- Տեղեկություն ստանալու իրենց իրավունքը քաղաքացիները կարող են պաշտպանել նաև դատական կարգով: Այսինքն՝ եթե քաղաքացուն մերժել են կամ պատասխանել օրենքով սահմանված ժամկետների խախտումով, կամ տվել են ոչ ըստ էության պատասխան, վերջինս իր խախտված իրավունքի պաշտպանության համար կարող է դիմել դատարան: «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը սահմանում է բողոքով դատարան դիմելու իրավունքը. «Յուրաքանչյուր քաղաքացի, իրավաբանական անձ իրավունք ունի բողոքով դիմել դատարան, եթե գտնում է, որ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց և կազմակերպությունների անօրինաչափ գործողություններով (որոշումներով) խախտվել են իր իրավունքներն ու ազատությունները»:

13. Ի՞նչ անել, եթե տրված պատասխանը բավարար չէ:

Եթե առաջարկությանը, դիմումին կամ բողոքին տրված պատասխանը չի բավարարում, ապա դիմողը կարող է այն բողոքարկել 12-րդ կետում նշված կարգով:

14. Ի՞նչ պատասխանատվություն է կրում պետական մարմինը տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու համար:

«Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է պաշտոնատար անձանց պատասխանատվությունը. «Քաղաքացիների եւ իրավաբանական անձանց առաջարկությունների, դիմումների եւ բողոքների քննարկման սահմանված կարգի խախտման համար մեղավոր պաշտոնատար անձինք պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությանը համապատասխան»:

Տեղեկություն ստանալու իրավունքի խախտման համար պատասխանատվություն նախատեսված է ՀՀ քրեական եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերով:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի կանոններով, որոնք վերաբերում են պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց գործողություններին կամ անգործությանը, վերջիններիս պարտավորեցվում է կատարել օրենքով իրենց վրա դրված պարտականությունները՝ այսինքն տրամադրել պահանջվող տեղեկատվությունը:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ («Անփութություն») հոդվածի՝ «պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական պարտականություններին անփութ կամ անբարեխիղճ վերաբերվելու հետեւանքով դրանց չկատարելը, կամ ոչ պատշաճ կատարելը, որով էական վնաս (նյութական վնասի դեպքում ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափը գերազանցող գումարի) է հասցվել պետական կամ հասարակական շահերին, կամ քաղաքացիների՝ օրենքով պաշտպանվող իրավունքներին ու շահերին՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մինչեւ հինգ տարի ժամանակով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ մեկից մինչեւ երկու տարի ժամանակով, կամ տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վաթսուհարյուրից մինչեւ ութսունհարյուրի չափով, կամ պաշտոնանկությամբ:

Կարելի է նշել սակայն, որ քաղաքացին նույապես կարող է ենթարկվել պատասխանատվության, եթե նրա դիմումը կամ բողոքը պարունակում է զրպարտչական կամ անձի պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկություններ («Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենք, 9-րդ հոդված): ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ եւ 132-րդ հոդվածները սահմանում են համապատասխանաբար զրպարտության եւ վիրավորանքի համար նախատեսված պատիժները՝ ազատազրկումից մինչեւ տուգանք:

15. Կարո՞ղ են արդյոք մարդիկ մասնակցել պետական մարմինների նիստերին:

Ազգային Ժողովի նիստեր

Ազգային ժողովի նիստերը դռնբաց են, բայց դրանց մասնակցելու իրավունք ունեն միայն ԱԺ-ում հավատարմագրված լրագրողները (ԱԺ կանոնակարգ, 5-րդ հոդված):

Կառավարության նիստեր- «ՀՀ կառավարության կառուցվածքը եւ գործունեության կարգը սահմանելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրում թվարկված են այն անձինք, ովքեր կարող են մասնակցել կառավարության նիստերին: Այսպես՝ կառավարության նիստերին կարող են մասնակցել ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարը, վարչապետի խորհրդականները, օգնականները, կառավարության քարտուղարու-

թյան աշխատակիցներ եւ այլն: Այդ ցանկում սովորական քաղաքացիներն ընդգրկված չեն:

Ավագանու նիստեր- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը սահմանում է. «համայնքի ավագանու նիստը դռնբաց է»: Օրենքը դռնբացության սկզբունքի որեւէ սահմանափակում չի դնում: Նշանակում է՝ համայնքի յուրաքանչյուր բնակիչ կարող է մասնակցել այդ նիստերին:

Մարզպետարանի նիստեր

«ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի համաձայն՝ մարզի խորհրդի նիստերին մարզպետի հրավերով կարող են մասնակցել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարները, մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները եւ այլ անձինք: Բնականաբար, քաղաքացիները չեն կարող մասնակցել այս նիստերին, եթե չունեն մարզպետի հրավերը:

Քանի որ Երեւան քաղաքն ունի մարզի կարգավիճակ, քաղաքապետարանի նիստերին մասնակցության կարգը նույնն է:

Դատական նիստեր

Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի ... անկախ եւ անկողմնապահ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք»: Սահմանադրական այս նորմն իր հաստատումն է գտել «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 2-րդ, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, «Դատարանական զմուռնության մասին» ՀՀ օրենքի 9-րդ, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածներում: Այս հոդվածները երաշխավորում են դատական նիստերի դռնբացության սկզբունքը: Այսինքն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի մասնակցել դատական նիստերին, կատարել գրառումներ, սղագրություններ, ձայնագրություն: Բացի այդ, նիստին ներկա գտնվողները կարող են կատարել դատական նիստի կինո եւ լուսանկարահանում, տեսաձայնագրում, ինչպես նաեւ՝ հեռարձակում ռադիոյով եւ հեռուստատեսությամբ, եթե կա կողմերի համաձայնությունը եւ գործը քննող դատարանի թույլտվությունը:

Քրեական գործերի քննության ժամանակ լուսաբանման հարցի լուծումը պայմանավորված է միայն նիստը նախագահողի որոշմամբ, կողմերի կամահայտությունն այստեղ որոշիչ չէ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մասնակցել դատական նիստերին, կատարել գրառումներ, սղագրություններ, ձայնագրություն:

Դռնփակ դատական քննությունն անց է կացվում միայն օրենքով սահմանված դեպքերում:

Յուրաքանչյուր քաղաքացի կարող է եւ իրավունք ունի ծանոթանալ դատարանի որոշմանը:

Իրավական ակտերի հրապարակում է համարվում նաեւ դրանք համայնքի տարածքի տարբեր վայրերում այդ նպատակով նախատեսված ցուցատախտակներին փակցնելը: Ցուցատախտակները տեղադրվում են՝ ելնելով համայնքի բնակչության թվից՝ 100 բնակչին ոչ պակաս, քան մեկ ցուցատախտակ:

Քաղաքացիներին պետք է տեղեկացնել պետական եւ համայնքային բյուջեների ձեւավորման եւ կատարման մասին:

Դռնփակ դատական քննությունն անց է կացվում միայն օրենքով սահմանված դեպքերում: ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածը նշում է. «Գործի քննությունը դռնփակ նիստում թույլատրվում է օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես նաև՝ որդեգրման գաղտնիությունը, քաղաքացիների անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունն ապահովելու, առետրային կամ այլ գաղտնիք պահպանելու անհրաժեշտության վերաբերյալ միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու դեպքում»: ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի («Դատական քննության հրապարակայնությունը») երկրորդ կետը սահմանում է. «Դռնփակ դատական քննություն անցկացվում է օրենքով նախատեսված դեպքերում՝ հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, կողմերի անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով»:

16. Ո՞ր տեղեկությունները պետք է պետական մարմինները պարտադիր հրապարակեն:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ «օրենքները կիրառվում են միայն պաշտոնական հրապարակումից հետո»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պարտադիր հրապարակման ենթակա են.

1. ՀՀ միջազգային պայմանագրերը
2. ՀՀ օրենքները
3. ՀՀ կառավարության օրենքի ուժ ունեցող որոշումները
4. ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները
5. ՀՀ Ազգային ժողովի որոշումները
6. ՀՀ Նախագահի հրամանագրերը եւ կարգադրությունները
7. ՀՀ կառավարության որոշումները
8. ՀՀ վարչապետի որոշումները
9. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումները եւ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի որոշումներն ու կարգադրությունները
10. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները
11. Կարգավորող հանձնաժողովների որոշումները
12. ՀՀ նախարարների հրամանները, մարզպետների, Երեսնի քաղաքապետի որոշումները եւ կարգադրությունները
13. ՀՀ համայնքի ավագանու եւ համայնքի ղեկավարի որոշումները
14. ՀՀ առաջին ատյանի դատարանի, վերաքննիչ դատարանի եւ վճռաբեկ դատարանի որոշումները, վճիռները եւ դատավճիռները
15. Պետական այլ մարմինների, պետական եւ տեղական ինքնակառավարման հիմնարկների ու իրավաբանական անձանց իրավական ակտերը:

Օրենքի 64-րդ հոդվածի համաձայն՝ վերը նշված 1-8-ը համարակալված իրավական ակտերը հրապարակվում են «ՀՀ պաշտոնական տեղեկագրում»՝ դրանք ստանալու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Իսկ 65-րդ հոդվածի համաձայն՝ 9-12-ը համարակալված իրավական ակտերը՝ «ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում»՝ դարձյալ դրանք ստանալու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Համայնքի ավագանու որոշումները, համայնքի ղեկավարի որոշումները, ինչպես նաև՝ «օրենքին կամ այլ իրավական ակտերին հակասող, իրավաբանական եւ ֆիզիկական անձանց իրավունքներն ու օրենքով պաշտպանվող շահերը խախտող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավական ակտն անվավեր ճա-

նաչելու մասին ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտը» հրապարակվում են «Համայնքի իրավական ակտերի տեղեկագրում»: Նշված իրավական ակտերի հրապարակում է համարվում նաև դրանք համայնքի տարածքի տարբեր վայրերում այդ նպատակով նախատեսված ցուցատախտակներին փակցնելը: «Համայնքի իրավական ակտերի տեղեկագիրը» հրատարակվում է՝ ելնելով համայնքի բնակչության թվից՝ 100 բնակչին ոչ պակաս, քան մեկ օրինակ տպաքանակով: Իսկ ցուցատախտակները տեղադրվում են՝ դարձյալ ելնելով համայնքի բնակչության թվից՝ 100 բնակչին ոչ պակաս, քան մեկ ցուցատախտակ:

Նույն օրենքի 59-րդ հոդվածը նշում է, որ հրապարակման ենթակա չեն այն իրավական ակտերը կամ դրանց առանձին մասերը, որոնք պարունակում են պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք:

17. Կարելի՞ է արդյոք ձեռք բերել պետական եւ համայնքային բյուջեները:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը սահմանում է հրապարակայնության սկզբունքը: Դա նշանակում է, որ քաղաքացիներին պետք է տեղեկացնել պետական եւ համայնքային բյուջեների ձեւավորման եւ կատարման մասին: Յուրաքանչյուր տարի Ազգային ժողովն ընդունում է օրենքներ պետական բյուջեի եւ դրա կատարման հաշվետվության մասին: Դրանք հրապարակվում են «ՀՀ պաշտոնական տեղեկագրում»՝ 16-րդ կետում նշված կարգով:

Համայնքների բյուջեների վերաբերյալ որոշումներ են ընդունում համայնքների ավագանիները: Համապատասխանաբար, դրանք հրապարակվում են «Համայնքի իրավական ակտերի տեղեկագրում» կամ տեղադրվում են նախատեսված ցուցատախտակներին: Բացի այդ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածը տեղական ինքնակառավարման մարմիններին պարտավորեցնում է հրատարակել համայնքի զարգացման եռամյա ռազմավարական ծրագիրը: Համայնքի բնակիչներին այն ավելի մատչելի դարձնելու համար օրենքի նույն հոդվածը միաժամանակ պարտավորեցնում է տեղական մարմիններին պատրաստել եւ հրատարակել հիմնական ցուցանիշներ, վիճակագրական եւ գրաֆիկական տվյալներ պարունակող տեղեկատուներ եւ գրքույկներ:

ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀՀ Սահմանադրությունը հռչակում է մարդու տեղեկություն ստանալու իրավունքը: «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքը սահմանում է տեղեկություն ստանալու իրավունքի իրականացման մեխանիզմները: Բայց կան մի շարք այլ օրենքներ եւ իրավական ակտեր, որոնք վերաբերում են որոշակի ոլորտների վերաբերյալ տեղեկությունների մատչելիությանը:

Դատական տեղեկատվություն

Եթե դատարանի որոշումը հրապարակվում /ընթերցվում/ է դռնբաց, ապա յուրաքանչյուր քաղաքացի կարող է եւ իրավունք ունի ծանոթանալ դատարանի որոշմանը: Քանի որ օրենսդրությամբ նշված չէ, թե դատարանի որոշումը չի կարող տրվել գործին չմասնակցած անձանց, ուստի բոլոր քաղաքացիներն այն ստանալու իրավունք ունեն:

Դատական գործի ավարտից հետո դատական նիստերի եւ դատավարության ընթացքն արձանագրող այլ փաստաթղթերը կարող են ձեռք բերել.

1. կողմերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59 հոդված),
2. քաղաքացիական հայցվորը (61-րդ հոդվածի 1-ին մասի 7, 8, 11 կետեր),
3. կասկածյալը (63-րդ հոդվածի 2-րդ մասի 2, 3, 4, 15, 16 կետեր),
4. մեղադրյալը (65-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 15, 16, 19 կետեր),
5. պաշտպանը (73-րդ հոդվածի 1-ին մասի 1, 6, 11, 12, 14 կետեր),
6. քաղաքացիական պատասխանողը (75-րդ հոդվածի 1-ին մասի 8, 9, 12 կետեր),
7. տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչը (77-րդ հոդվածի 1-ին մասի 10-12, 14 կետեր),
8. տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչը (79-րդ հոդվածի 1-ին մասի 8-10 կետեր),
9. տուժողի իրավահաջորդը (80-րդ հոդվածի 4-րդ մաս):

Նույն մոտեցումն ունի նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, որի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը նախատեսել է, որ «Գործին մասնակցող անձինք իրավունք ունեն ծանոթանալ գործի նյութերին, քաղվածքներ անել, ստանալ դրանց պատճենները»:

Արխիվային փաստաթղթեր

Արխիվների մատչելիությունը եւ հրապարակայնությունը ՀՀ-ում կարգավորվում է «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի մասին» ՀՀ օրենքով եւ մի շարք ենթաօրենսդրական ակտերով:

ՀՀ կառավարության «ՀԱԱՖ-ի պետական սեփականություն հանդիսացող փաստաթղթերի օգտագործման եւ հրապարակման ընդհանուր կարգը» որոշման համաձայն՝ ՀԱԱՖ-ի փաստաթղթերը ենթակա են օգտագործման քաղաքական, տնտեսական, սոցիալական, գիտական, մշակութային, ստեղծագործական, ՀՀ եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու, ինչպես նաեւ՝ օրենքով չարգելված այլ նպատակներով: Նույն կարգի համաձայն՝ ՀԱԱՖ-ի փաստաթղթերի օգտագործման ձեւերն են՝ իրավաբանական եւ ֆիզիկական անձանց արխիվային տեղեկատվության պահանջ-մունքի բավարարումը (սոցիալ-իրավական բնույթի հարցումներ, իրավաբանական անձանց տրամադրվող տեղեկատվություն, թեմատիկ ցանկերի կազմում, արխիվային

տեղեկանքներից, փաստաթղթերից քաղվածքների ու պատճենների տրամադրում), արխիվների ընթերցասրահներում ուսումնասիրողներին փաստաթղթերի տրամադրումը: ՀԱԱՖ-ի փաստաթղթերից իրավաբանական եւ ֆիզիկական անձինք կարող են օգտվել նաեւ գրավոր հարցումների միջոցով: Արխիվային փաստաթղթերի մասին հարցումներին ՀՀ կառավարությանն առընթեր արխիվային գործերի վարչությունը պատասխանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պետական սեփականություն հանդիսացող պետական եւ գերատեսչական արխիվներում պահպանվող փաստաթղթերի օգտագործումն անվճար է:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ

Պետական սեփականություն հանդիսացող պետական եւ գերատեսչական արխիվներում պահպանվող փաստաթղթերի օգտագործումն անվճար է:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածը արգելում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը եւ տարածելը:

Յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի համայնքի ղեկավարից ստանալ տվյալ տեղամասի ընտրողների ցուցակների պատճենները՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած վճարով: Համայնքի ղեկավարը պարտավոր է երեք օրվա ընթացքում քաղաքացուն տրամադրել ընտրողների համապատասխան ցուցակը:

Ընկերության հաշվապահական հաշվառման եւ ֆինանսական փաստաթղթերին, բացառությամբ գաղտնի տեղեկությունների, ինչպես նաեւ՝ կոլեզիալ գործադիր մարմնի նիստերի արձանագրությունների, միանձնյա գործադիր մարմնի հրամանների եւ հրահանգների, հնարավորություն ունեն ծանոթանալ միայն ընկերության բաժնետերերը:

Մասնավոր կյանքին առնչվող տեղեկություններ

ՀՀ քրօրի նախագծի 149-րդ հոդվածը նախատեսում է. «Անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի օգտագործելը կամ տարածելը, մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք հանդիսացող տեղեկություններն, առանց նրա համաձայնության օգտագործելը կամ հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ լրատվության միջոցներով աշխարհի տեղեկությունները տարածելը, եթե դրանք նախատեսված չեն օրենքով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչեւ հինգհարյուրապատիկի չափով կամ կալանքով երկուսից մինչեւ վեց ամիս ժամկետով»:

Ընտրական տեղեկատվություն

Ընտրությունների մասին տեղեկություններ ստանալու իրավունքի լրացուցիչ երաշխիքներ է տալիս ՀՀ Ընտրական օրենսգիրքը: Օրենսգրքի 7-րդ հոդվածը հռչակում է. «Ընտրությունները նախապատրաստվում եւ անցկացվում են հրապարակայնորեն»: Օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «Քաղաքացիները, սույն օրենսգրքով սահմանված կարգով, տեղեկացվում են ընտրական հանձնաժողովների կազմի, գտնվելու վայրի, աշխատաժամերի, ընտրական տեղամասերի եւ տեղամասային կենտրոնների կազմավորման, ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունների վերաբեր-

յալ դիմումներ տալու ժամկետի, թեկնածուների առաջադրման, գրանցման, քվեարկության օրվա եւ ընտրությունների արդյունքների մասին»:

Օրենսգրքի մեկ այլ հոդված՝ 12-րդը, իրավունք է տալիս յուրաքանչյուրին «ազատորեն ծանոթանալ ընտրողների ցուցակներին»: Հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ «յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի համայնքի ղեկավարից ստանալ տվյալ տեղամասի ընտրողների ցուցակների պատճենները՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած վճարով: Համայնքի ղեկավարը պարտավոր է երեք օրվա ընթացքում քաղաքացուն տրամադրել ընտրողների համապատասխան ցուցակը»:

Մասնավոր ընկերությունների մասին տեղեկություններ

Մասնավոր ընկերությունների վերաբերյալ տեղեկությունների մատչելիությունը ապահովվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով: Օրենքի 96-րդ հոդվածը թվարկում է այն տեղեկությունները, որոնք ընկերությունն ինքը պետք է պարտադիր հրապարակի մամուլի միջոցով.

1. Ընկերության տարեկան հաշվետվությունը, հաշվապահական հաշվեկշիռը, շահույթի եւ վնասների հաշիվը,
2. բաժնետոմսերի բաց բաժանորդագրության դեպքում՝ ընկերության բաժնետոմսերի թողարկման ազդագիրը,
3. տարեկան ժողովի գումարման մասին հայտարարությունը՝ սույն օրենքով սահմանված կարգով,
4. սույն օրենքով, «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով եւ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

Սակայն, ընկերության հաշվապահական հաշվառման եւ ֆինանսական փաստաթղթերին, բացառությամբ գաղտնի տեղեկությունների, ինչպես նաեւ՝ կոլեգիալ գործադիր մարմնի նիստերի արձանագրությունների, միանձնյա գործադիր մարմնի հրամանների եւ հրահանգների, հնարավորություն ունեն ծանոթանալ միայն ընկերության բաժնետերերը: Բաժնետիրոջ պահանջով Ընկերությունը հնգօրյա ժամկետում պարտավոր է նրան տրամադրել իրեն մատչելի փաստաթղթերի պատճենները: Պատճեններ տրամադրելու համար վճարի չափը, որը սահմանում է ընկերությունը, չի կարող դրանց պատրաստման եւ փոստային առաքման ծախսերից ավելի լինել:

Վերը նշված գաղտնի տեղեկությունները տրամադրվում են միայն խորհրդի անդամներին եւ վերատուգող հանձնաժողովին՝ վերջինիս պահանջով:

Վիճակագրական տեղեկատվություն

Վիճակագրական տեղեկատվության մատչելիությունն ապահովվում է «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով, որով հռչակվում է այդ տեղեկատվության մատչելիությունն ու հրապարակայնությունը:

Օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է «հանրությանը սահմանված կարգով տեղեկատվությամբ ապահովելու» դրույթը: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր ոք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է դիմել եւ ձեռք բերել վիճակագրական տեղեկություններ, բացառությամբ վիճակագրական գաղտնիք պարունակող տեղեկությունների (վիճակագրական տվյալները համարվում են գաղտնի, եթե դրանց միջոցով հնարավոր է ուղղակի կամ անուղղակի ձեռով բացահայտել վիճակագրական տեղեկություն տրամադրողին՝ ձեռք բերել անհատական, անվանական տեղեկություններ):

Պետական վիճակագրություն իրականացնող մարմինը՝ Վիճակագրության ազգային ծառայությունը, հաստատում է վիճակագրական աշխատանքների տարեկան եւ եռամսյա ծրագրերը: Տարեկան ծրագրով նախատեսվում է անվճար տրամադրվող տե-

ղեկավարության կազմը եւ տրամադրման կարգը: Իսկ ծրագրով նախատեսված վիճակագրական տեղեկատվությունից անվճար օգտվողների ցանկում չընդգրկված եւ ծրագրով անվճար տրամադրվող տեղեկատվության ծավալից դուրս այլ սպառողներին տրամադրվող տեղեկատվության, դրա մշակման, ամփոփման աշխատանքների դիմաց Ծառայությունը գանձում է վճար, որի հաշվարկման, վճարման եւ օգտագործման կարգը սահմանում է կառավարությունը («Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենք, 14-րդ հոդված, կետ բ):

Բանկային տեղեկատվություն

Բանկային ոլորտի տեղեկատվության մատչելիությունը կարգավորվում է «Բանկերի եւ բանկային գործունեության մասին», «ՀՀ կենտրոնական բանկի մասին», «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքներով եւ այլ իրավական ակտերով:

Ըստ «Բանկերի եւ բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի՝ բանկերը, Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով, պարտավոր են պարբերաբար հրապարակել տեղեկություններ իրենց գործունեության, ավանդների ընդունման եւ վարկերի տրամադրման կարգի եւ պայմանների վերաբերյալ: Նույն օրենքի 59-րդ հոդվածը բանկերին պարտավորեցնում է ֆինանսական տարվա ավարտից հետո վեցամսյա ժամկետում մամուլում հրապարակել իրենց հաշվեկշռի եւ աուդիտային եզրակացության համառոտ ամփոփագիրը, տարեկան ֆինանսական հաշվետվությունը: Իսկ մինչեւ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը նրանք պարտավոր են հրապարակել իրենց եռամսյակային ֆինանսական հաշվետվությունը:

Ըստ «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի՝ հրապարակային պետք է լինեն նաեւ ԿԲ-ի ղեկավար անձանց ֆինանսական փաստաթղթերը: Այսպես, 23-րդ հոդվածը նշում է. «ԿԲ նախագահը, նախագահի տեղակալը եւ խորհրդի մյուս անդամները առաջադրվելիս եւ նշանակվելիս, իսկ նշանակումից հետո յուրաքանչյուր տարին մեկ պարտավոր են հրապարակել տեղեկատվություն իրենց եկամտի աղբյուրների, ինչպես նաեւ՝ իրենց եւ իրենց հետ ընդհանուր տնտեսություն վարող անձանց բոլոր էական ֆինանսական շահերի մասին»:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶՍՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ

Յուրաքանչյուր ոք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է դիմել եւ ձեռք բերել վիճակագրական տեղեկություններ, բացառությամբ վիճակագրական գաղտնիք պարունակող տեղեկությունների

Բանկերի վերահսկողության կապակցությամբ բանկերի եւ դրանց հաճախորդների վերաբերյալ Կենտրոնական բանկին հայտնի դարձած տեղեկությունները համարվում են բանկային գաղտնիք:

Նշված տեղեկություններից բացի այլ բանկային տեղեկություններ քաղաքացիները ստանալ չեն կարող, որովհետեւ դրանք դասվում են բանկային գաղտնիքի շարքը: «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի կատարած գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաեւ՝ նրա առետրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները եւ նրա վերաբերյալ ցան-

կացած տեղեկատվություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, եւ բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ:

2. Բանկերի վերահսկողության կապակցությամբ բանկերի եւ դրանց հաճախորդների վերաբերյալ Կենտրոնական բանկին հայտնի դարձած սույն հոդվածի առաջին մասում սահմանված տեղեկությունները համարվում են բանկային գաղտնիք: Բանկերը համարվում են Կենտրոնական բանկի հաճախորդներ»:

Ըստ նույն՝ ՀՀ «Բանկային գաղտնիքի մասին» օրենքի նույն հոդվածի՝

«Սույն օրենքի իմաստով երրորդ անձ են համարվում՝ բացի տվյալ բանկից եւ իր հաճախորդից, բոլոր այլ անձինք, ընդ որում Կենտրոնական բանկը եւ բանկերը երրորդ անձ չեն հանդիսանում»:

Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի, որը զետեղված է «Քաղաքացիական իրավունքի օբյեկտները» բաժնի «Ընդհանուր դրույթներ» գլխում,

«1. Տեղեկատվությունը ծառայողական, առետրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առետրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն եւ տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:

2. Տեղեկությունները, որոնք չեն կարող ծառայողական, առետրային կամ բանկային գաղտնիք լինել, սահմանվում են օրենքով:

3. Ծառայողական, առետրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունը պաշտպանվում է սույն օրենքով եւ այլ օրենքներով նախատեսված եղանակներով:

4. Ծառայողական, առետրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունն ապօրինի եղանակներով ստացած անձինք պարտավոր են հատուցել պատճառված վնասները: Նման պարտականություն է դրվում նաեւ քաղաքացիական-իրավական կամ աշխատանքային պայմանագրի խախտմամբ ծառայողական, առետրային կամ բանկային տեղեկատվություն հրապարակած պայմանադիր կողմերի վրա»:

«Բանկային գաղտնիքի մասին» օրենքի համաձայն՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են տրամադրվել միայն.

1. քրեական հետապնդում հարուցող մարմիններին՝ խուզարկության մասին դատարանի որոշմամբ (հոդ. 10),

2. դատարանին՝ ՀՀ քաղաքացիական դատավարության կամ քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված կարգով ընդունված որոշման վրա, ինչպես նաեւ՝ իր հաճախորդի բանկային հաշվի վրա բռնագանձում տարածելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի կամ դատավճռի հիման վրա,

3. հաճախորդի ժառանգներին (իրավահաջորդներին), եթե վերջիններս կամ նրանց ներկայացուցիչները տվյալ անձանց ժառանգության իրավունքները հիմնավորող բավարար փաստաթղթեր են ներկայացրել,

4. հարկային մարմիններին՝ դատարանի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության կամ քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված կարգով ընդունված որոշման վրա, ինչպես նաեւ՝ իր հաճախորդի բանկային հաշվի վրա բռնագանձում տարածելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի կամ դատավճռի հիման վրա: